https://doi.org/10.46991/S&L/2020.88.027

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Քրիստինե Գաբուզյան
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Հայցային վաղեմությունն ավանդաբար համարվում է դատական պաշտպանության իրավունքը սահմանափակող ինստիտուտ[1] (դա ամրագրում է նաև Քաղաքացիական օրենսգրքի[2] (այսուհետ նաև՝ ՔՕ) 331-րդ հոդվածը. «Հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի *հայցով* իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը»): Սակայն դատական պաշտպանությունը, լինելով իրավունքների պաշտպանության հիմնական ձևը, այնուամենայնիվ, միակը չէ: Իրավունքի պաշտպանությունն իրականացվում է նաև այլ ձևերով՝ յուրիսդիկցիոն և ոչ յուրիսդիկցիոն: Վերջիններիս շրջանակում իր ուրույն տեղն ունի իրավունքների ինքնապաշտպանությունը[3], երբ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված դեպքերում քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել նաև իրավազոր անձի կողմից[4]:

Այս տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում քաղաքացիական իրավունքների պաշտպանության օպերատիվ ներգործության կամ իրավունքի ինքնապաշտպանության միջոցների[5] նկատմամբ հայցային վաղեմության կիրառման հնարավորության հարցի քննարկումը:

---

[1] Տե՛ս Guide on Article 6 of the European Convention on Human Rights Right to a fair trial (civil limb), Council of Europe/European Court of Human Rights, 2020, Updated to 30 April 2020, կետ 109, https://www.echr.coe.int/documents/guide_art_6_eng.pdf, Stubbings and Others v. The United Kingdom, 36-37/1995/542-543/628-629, Council of Europe: European Court of Human Rights, 22 October 1996, կետ 50, https://www.refworld.org/cases,ECHR, 3ae6b6191c.html:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՀՊՏ, 1998.08.10/17(50), ընդունվել է 05.05.1998, ուժի մեջ է մտել 01.01.1999:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**, Եր., 2010, «Իրավունք», 1086 էջ, էջ 215:

[4] Տե՛ս **Բարսեղյան Տ. Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, 4-րդ հրատ., դասագիրք, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2014, էջ 86:

[5] Քաղաքացիական իրավունքի տեսության մեջ երկու տարբեր մոտեցումներ են առկա. հեղինակների մի մասը ինքնապաշտպանությունն ընկալում է լայն առումով և դրա տակ ներառում ցանկացած գործողություն, որ անձը ձեռնարկում է իր իրավունքների, շահերի պաշտպանության համար ինքնուրույն՝ առանց իրավասու մարմիններին դիմելու: Տե՛ս **Камалов Б. А., Юнусова Р. И., Самитов Э. О.,** Самозащита в гражданском праве: вопросы теории, законодательного регулирования и практики, Colloquium-journal №14 (38), часть 8, 2019, Варшава, էջ 57, http://www.colloquium-journal.org/wp-content/uploads/2019/07/Colloquium-journal-1438-chast-8.pdf): Այսինքն՝ տվյալ խումբը ինքնապաշտպանության տակ ներառում է թե՛ փաստական, թե՛ իրավաբանական բնույթի գործողությունները, տե՛ս **Микшис Д. В.,** Способы самозащиты гражданских прав, Юридическая наука и правоохранительная практика, 2011, №3 (17), с. 40-48, էջ 40, **Максимов В. А.,** Основания самозащиты гражданских прав собственниками, Ленинградский юридический журнал, 2016, № 1(43), էջ 125:

Ինքնին ինքնապաշտպանությունը սահմանափակ կիրառություն ունի. անձը կարող է ինքնապաշտպանություն իրականացնել միայն օրենքով չարգելված եղանակներով, որոնք պետք է համաչափ լինեն խախտմանը և դուրս չգան խափանման համար անհրաժեշտ գործողությունների սահմաններից (ՔՕ 16-րդ հոդված). պայմանագրի կատարումից միակողմ հրաժարվելը[1], անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարվող գործողությունները, պարտատիրոջ կողմից պահումը, գրավի առարկայի արտադատական կարգով իրացումը, նախավճարի յուրացումը և այլն[2]: Այսինքն՝ ինքնապաշտպանության միջոցներն իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են տեղի ունենալ ինչպես իրավախախտման պահին, երբ ժամանակային խզում առկա չէ, այնպես էլ բավական տևական ժամանակ անց, որի դեպքում կարող է հայցային վաղեմության ժամկետն արդեն անցած լինել:

Հեղինակների մեծամասնությունը, ելնելով հայցային վաղեմության հասկացությունից և դիտելով այն որպես պետության կողմից տրամադրվող հարկադիր պաշտպանության ժամանակահատված, առհասարակ չեն անդրադառնում ինքնապաշտպանության միջոցների նկատմամբ հայցային վաղեմության կիրառելիության հարցին: Սակայն, այնուամենայնիվ, գրականության մեջ հանդիպում ենք նաև ինքնապաշտպանության նկատմամբ հայցային վաղեմության կիրառության կապակցությամբ հստակ դիրքորոշման:

Այսպես, որոշ հեղինակներ բացառում են հայցային վաղեմության ինստիտուտի կիրառությունը ինքնապաշտպանության նկատմամբ[3]: Ընդ որում Ա. Մ. Էրդելևսկին իր այս դիրքորոշումը պահպանում է անգամ ՌԴ ՔՕ 199-րդ հոդվածը՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո իրավունքի իրականացմանն ուղղված միակողմանի գործողությունների արգելք նախատեսող կարգավորմամբ լրացվելուց հետո[4]: Հեղինակը, ընդգծելով իրավունքի իրականացում և պաշտպանություն

Իսկ մեկ այլ խումբ հեղինակներ, նման գործողությունների սահմանազատման հիմքում դնելով դրանց փաստական կամ իրավաբանական բնույթը, տարբերակում են իրավունքի ինքնապաշտպանությունը (այդպիսիք են միայն փաստական բնույթի գործողությունները, ինչպես, օրինակ, ծայրահեղ անհրաժեշտության կամ անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարվող գործողությունները) և օպերատիվ ներգործության միջոցները (որպիսիք իրավապահպան բնույթի իրավաբանական գործողություններ են): Այս մասին առավել մանրամասն տե՛ս Гражданское право, в 4 т., Том 1, Общая часть, учебник 3-е издание, переработанное и дополненное, **под ред. Е.А. Суханова**, М., Волтерс Клувер, 2008, https://may.alleng.org/d/jur/jur407.htm#google_vignette, **Բարսեղյան Տ. Կ.**, նշվ. աշխատ., էջ 87:

Նկատի ունենալով, որ քաղաքացիական օրենսգիրքն օգտագործում է միայն «իրավունքի ինքնապաշտպանություն» եզրույթը, դրա տակ թերևս ներառելով փաստական և իրավաբանական բնույթի բոլոր նման գործողությունները, սույն աշխատանքում մենք ևս կօգտագործենք «իրավունքի ինքնապաշտպանություն» եզրույթը:

[1] Տե՛ս **Камалов Б. А., Юнусова Р. И., Самитов Э. О.,** նշվ. աշխատ., էջ 58, http://www.colloquium-journal.org/wp-content/uploads/2019/07/Colloquium-journal-1438-chast-8.pdf:

[2] Տե՛ս **Максимов В. А.,** նշվ. աշխատ., էջ 125, **Микшис Д. В.,** նշվ. աշխատ., էջ 42:

[3] Տե՛ս Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, части первой (постатейный), под ред. **С.П. Гришаева, А.М. Эрделевского** (Подготовлен для системы КонсультантПлюс, 2006), http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=CMB&n=1095 2#0618906771614318 4, https://help-stud.ru/erdelevski_kommentarii_gkrf.php, https://scibook.net/grajdanskoe-pravo/statya-195-ponyatie-iskovoy-16748.html:

[4] ՌԴ ՔՕ 199-րդ հոդվածը լրացվեց 3-րդ մասով, համաձայն որի՝ իրավունքի իրականացմանն ուղղված միակողմանի գործողություններ (հաշվանց, դրամական միջոցների անակցեպտ դուրսգրում, գրավ դրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձման տա-

հասկացությունների ինքնուրույն բնույթը, ժխտում է հայցային վաղեմության կիրառման հնարավորությունը ինքնապաշտպանության միջոցների նկատմամբ՝ համարելով, որ հիմքեր չկան 199-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնը դիտել որպես իրավունքի, որի դատական պաշտպանության համար հայցային վաղեմության ժամկետն արդեն լրացել է, ինքնապաշտպանության արգելք, և նշված մասում խոսքը վերաբերում է միայն իրավունքի իրականացմանն ուղղված միակողմանի գործողություններին, իսկ իրենցից խախտված իրավունքի ինքնապաշտպանություն ներկայացնող միակողմանի գործողությունների մասին չի հիշատակվում[1]:

Նման հիմնավորման հետ, կարծում ենք, դժվար է համաձայնել: Նախ, հիշյալ հոդվածում նշված որոշ միակողմանի գործողություններ, ինչպես, օրինակ, դրամական միջոցների անակցեպտ դուրսգրումը, կարող են լինել թե՛ պարտավորական իրավահարաբերության բովանդակության իրականացում և թե՛ ինքնապաշտպանություն, և բացի այդ՝ իրավունքի իրականացում ու պաշտպանություն հասկացությունները թեև չի կարելի նույնացնել, սակայն իրավունքի պաշտպանությունը, անկախ նրանից՝ ինչ ձևով և եղանակով է իրականացվում, իրականացվում է հենց այդ իրավունքների միջոցով, ուստի կարծում ենք՝ արգելքը վերաբերում է միաժամանակ և՛ ինքնապաշտպանությանը, և՛ պարտավորական իրավահարաբերության բովանդակություն կազմող միակողմանի գործողություններին:

Պետք է նշել, որ առհասարակ վերոնշյալ նորմը միանշանակ չի ընկալվում գրականության մեջ: Այսպես, տեսակետ է արտահայտվել, որ նորմի էությունը միակողմանի գործողություններն արգելելն է, որոնք ուղղված են հայցային վաղեմության ժամկետի հոսքը կասեցնելուն կամ ընդհատելուն այն պահանջներով, որոնց պաշտպանության համար հայցային վաղեմության ժամկետը լրացել է[2]:

Նման տեսակետը քննադատության չի դիմանում նախ մի պարզ պատճառով. կասեցման և ընդհատման հիմքերը հստակ սահմանված են օրենսդրությամբ և տարածական մեկնաբանման ենթակա չեն, ուստի ոչ մի պարագայում միակողմանի գործողությունները չեն կարող դիտվել որպես այդպիսի հիմք, և բացի այդ՝ հայցային վաղեմության ժամկետն արդեն լրացած լինելու պարագայում խոսք չի կարող լինել կասեցման կամ ընդհատման մասին[3]:

րածում և այլն), որոնց պաշտպանության համար հայցային վաղեմության ժամկետը լրացել է, չեն թույլատրվում:
Տե՛ս Федеральный закон от 07.05.2013 N 100-ФЗ (ред. от 28.12.2016) "О внесении изменений в подразделы 4 и 5 раздела I части первой и статью 1153 части третьей Гражданского кодекса Российской Федерации", http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_145981/3d0cac60971a511280cbba229d9b6329c07731f7/#dst100240:

[1] Տե՛ս **Эрделевский А. М.,** О некоторых вопросах исковой давности//Журнал российского права, № 3, М., 2015, էջ 59-60:

[2] Տե՛ս Постатейный комментарий к Гражданскому кодексу Российской Федерации. Часть первая, **Гришаев С.П., Богачева Т.В., Свит Ю.П.**, Специально для системы ГАРАНТ, 2019 г., http://base.garant.ru/77476412/, https://kommentarii.org/2019/04/kom_gk1/page319.html:

[3] Տե՛ս **Мозолин В.П., Масляев А.И.,** Гражданское право. часть первая, М., Изд. Юристъ, 2005, 719 с., https://www.twirpx.com/file/35788/,
https://jurisprudence.club/pravo-grajdanskoe/priostanovlenie-pereryiv-vosstanovlenie.html#:~:text=%D0%9F%D1%80%D0%B8%D0%BE%D1%81%D1%82%D0%B0%D0%BD%D0%BE%D0%B2%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5%2C%20%D0%BF%D0%B5%D1%80%D0%B5%D1%80%D1%8B%D0%B2%20%D0%B8%20%D0%B2%D0%BE%D1%81%D1%81%D1%82%D0%B0%D0%BD%D0%BE%D0%B2%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5%20%D1%81%D1%80%D0%BE%D0%BA%D0%BE%D0%B2%20%D0%B8%D1%81%D0%BA%D0%BE%D0%B2%D0%BE%D0%B9%20%D0%B4%D0%B0%D0%B2%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D0%B8,-%D0%98%D1%81%D0%BA%D0%BE%D0%B2%D0%B0%D1%8F%20%D0%B4%D0%B0%D

Իրականում վերը նշված փոփոխությունը, կարծում ենք, ուղղված է հենց հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո ինքնապաշտպանությունն արգելելուն[1]:

Մեզ մոտ առկա օրենսդրական կարգավորումների պարագայում դժվար է միանշանակ պատասխան տալ ինքնապաշտպանության դեպքում հայցային վաղեմության կիրառելիության հարցին: Հայցային վաղեմությունը կարգավորող ՔՕ դրույթների տառացի մեկնաբանման պարագայում ստացվում է, որ ինքնապաշտպանության միջոցների նկատմամբ հայցային վաղեմության ինստիտուտի կիրառումն անթույլատրելի է[2]: Հայցային վաղեմության ինստիտուտը կարգավորող դրույթներից ակնհայտորեն հետևում է, որ դրանց կիրառումը թույլատրվում է միայն դատարանում, իսկ հակառակ պնդումը կհակասեր իրավական որոշակիության սկզբունքին (նկատի ունենալով, որ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը (ՔՕ հ. 331). ինքնապաշտպանության դիմած անձի համար կանխատեսելի չէ հայցային վաղեմության ժամկետի կիրառումը, առավել ևս իր՝ ինքնապաշտպանությանն ուղղված գործողությունների իրավական հետևանքը):

Սակայն, մյուս կողմից, քանի որ իրավունքների ինքնապաշտպանությունն օրենքով կամ պայմանագրով անձին վերապահված որոշակի իրավունքների իրականացում է (օրինակ՝ պահման իրավունք), թվում է, թե նման իրավունքի իրականացման նկատմամբ հայցային վաղեմություն չկիրառելու հիմքեր, համենայն դեպս առերևույթ, առկա չեն:

Բացի այդ, ինքնապաշպանության միջոցների նկատմամբ հայցային վաղեմության կիրառության վկայություն կարող է դիտվել նաև ՔՕ 336-րդ հոդվածը (հիմնական պահանջով հայցային վաղեմության ժամկետի ավարտմամբ լրանում է նաև լրացուցիչ պահանջներով (գրավ, տուժանք, պահում, երաշխավորություն, նախավճար) հայցային վաղեմության ժամկետը), որը փաստացի թույլ է տալիս հայցային վաղեմություն վկայակոչել նաև ինքնապաշտպանությանն ուղղված գործողությունների կապակցությամբ:

Ավելին, նկատի ունենալով, որ հաշվանցի համար բավարար է նաև մեկ կողմի կամահայտնությունը[3], ՔՕ-ն փաստացի պարունակում է ինքնապաշտպանությանն

0%B2%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D1%8C%2C%20%D0%BA%D0%B0%D0%BA&text=%D0%A1%D1%83%D1%89%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D1%8C%20%D0%BF%D1%80%D0%B8%D0%BE%D1%81%D1%82%D0%B0%D0%BD%D0%BE%D0%B2%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F%20%D0%B8%D1%81%D0%BA%D0%BE%D0%B2%D0%BE%D0%B9%20%D0%B4%D0%B0%D0%B2%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D0%B8%20%D0%B7%D0%B0%D0%BA%D0%BB%D1%8E%D1%87%D0%B0%D0%B5%D1%82%D1%81%D1%8F,%D0%BE%D1%81%D0%BD%D0%BE%D0%B2%D0%B0%D0%BD%D0%B8%D0%B9%20%D1%81%D1%80%D0%BE%D0%BA%20%D0%BF%D1%80%D0%BE%D0%B4%D0%BE%D0%BB%D0%B6%D0%B0%D0%B5%D1%82%20%D1%82%D0%B5%D1%87%D1%8C%2C%20%D1%82:

[1] Տե՛ս Сделки, представительство, исковая давность: постатейный комментарий к статьям 153–208 Гражданского кодекса Российской Федерации, отв. ред. **А. Г. Карапетов,** комментарии к статьям 181, 195–201, 206–208 ГК РФ - **Сарбаш С. В.,** М., Изд. М-Логос, 2018, 1264 с., էջ 1181:

[2] Թերևս հենց նման մոտեցմամբ էր (ինքնապաշտպանության նկատմամբ հայցային վաղեմության չտարածվելու) պայմանավորված ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածի լրացումը նոր՝ 3-րդ մասով՝ ուղղված ինքնապաշտպանական գործողություններն արգելելուն:

[3] Պետք է նկատի ունենալ, որ հաշվանց կարող է իրականացվել ինչպես միայն կողմերից մեկի կամահայտնությամբ (ընդ որում մյուս կողմը, որպես կանոն, չի կարող առարկել հաշվանցի իրականացման դեմ), այնպես էլ երկկողմանի համաձայնությամբ, որոնք կարող են տեղի ունենալ ցանկացած պահի: Տե՛ս Комментарий к Гражданскому кодексу

ուղղված միակողմանի գործողության ուղղակի արգելք[1]. պահանջների հաշվանց չի թույլատրվում, եթե մյուս կողմի դիմումով պահանջի նկատմամբ ենթակա է կիրառման հայցային վաղեմության ժամկետ, և այդ ժամկետը լրացել է (ՔՕ հոդվածներ 426, 427):

Բացի այդ, շփոթություն են առաջացնում նաև անհիմն հարստացման վերաբերյալ ՔՕ կարգավորումները: Այսպես, ՔՕ 1092-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը), բացառությամբ սույն օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի: Իսկ «Չվերադարձվող անհիմն հարստացում» վերտառությունը կրող 1099-րդ հոդվածն էլ սահմանում է, որ որպես անհիմն հարստացում ենթակա չէ վերադարձման, ի թիվս այլնի, վաղեմության ժամկետի ավարտից հետո ի կատարումն պարտավորության տրված գույքը:

Այսպիսով, ստացվում է կազուսային իրավիճակ. մի կողմից առկա է իրավաչափ գործողություն (նկատի ունենալով, որ անձի արարքը ինքնապաշտպանություն կարող է համարվել իր հիմքում իրավական նորմ կամ պայմանագիր ունենալու դեպքում), որի արդյունքում ձեռք բերվածը ոչ մի պարագայում չի կարող համարվել անհիմն հարստացում, բայց մյուս կողմից էլ նույն արարքը մեկ այլ՝ ՔՕ 1099-րդ հոդվածի, որի կիրառության համար հարկավոր է անհիմն հարստացման փաստի առկայություն[2], մեկնաբանության արդյունքում որակվում է որպես ոչ իրավաչափ, անթույլատրելի:

Այսինքն՝ պրակտիկայում տվյալ նորմի ընդունված մեկնաբանությունն այն է, որ վաղեմության ժամկետի ավարտից հետո ի կատարումն պարտավորության

Российской Федерации, части первой (постатейный), под ред. **О.Н. Садикова**, КОНТРАКТ, ИНФРА-М, 2005 (издание третье, исправленное, дополненное и переработанное), http://gkodeksrf.ru/ch-1/rzd-3/podrzd-1/gl-26/st-410-gk-rf:

[1] Տե՛ս Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, части первой (постатейный), по состоянию на 1 января 2006 года, под ред. **С.П. Гришаева, А.М. Эрделевского,** https://help-stud.ru/erdelevski_kommentarii_gkrf.php, ՈՂ ՔՕ համապատասխան նորմի մեկնաբանությունում նշվում է, որ եթե հաշվանցի դեմ կողմը առարկում է՝ վկայակոչելով հայցային վաղեմության ժամկետի կիրառումը պահանջի նկատմամբ և դրա լրացած լինելը, ապա հաշվանց չի կարող իրականացվել, եթե նույնիսկ հետագայում պարզվում է, որ հայցային վաղեմության ժամկետը տվյալ դեպքում չի կիրառվում, կամ այդ ժամկետը չի լրացել: Նման մեկնաբանությունը՝ հայցային վաղեմությանը հետագայում անդրադառնալու մասով, հիմք է ենթադրելու, որ հոդվածում խոսքը հենց արտադատական կարգով հաշվանցի մասին հայտարարելուն է վերաբերում: Թեպետ, գրականության մեջ նաև կարծիք է արտահայտվել, որ հաշվանցի անթույլատրելիությունը վերաբերում է միայն դատական կարգով հաշվանց պահանջելուն: Տե՛ս Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации: В 3 т. Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, части первой (постатейный), том 1, 3-е издание, переработанное и дополненное, под ред. **Т.Е. Абовой, А.Ю. Кабалкина**, Изд. "Юрайт-Издат", 2007, https://www.lawmix.ru/commlaw/1213?page=67, https://lawbook.online/kniga-grajdanskoe-pravo-rossii/statya-411-sluchai-nedopustimosti-19721.html:

[2] Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածով սահմանված՝ անհիմն հարստացման չվերադարձման դեպքերին, բազմիցս նշել է, որ այդ նորմով նախատեսված կարգավորման կիրառելիության հարցը ենթակա է քննության միայն անհիմն հարստացման փաստի առկայության հիմնավորվածության պայմաններում, մինչդեռ դրա բացակայության դեպքում միանշանակ է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099-րդ հոդվածը կիրառվել չի կարող: Տե՛ս, ի թիվս այլնի, Վճռաբեկ դատարանի՝ 2015 թ. հուլիսի 17-ի թիվ ԵԷԴ/0540/02/12 քաղաքացիական գործով կայացրած որոշումը, https://www.arlis.am/documentview.aspx?docID=103145:

տրված գույքը անհիմն հարստացում է, այն է՝ չունի իրավական հիմք[1], թեև չի կարող վերադարձվել:

Սակայն, ինչպես նշեցինք, ՔՕ 1099-րդ հոդվածում խոսքը վաղեմության ժամկետի ավարտից հետո ***ի կատարումն պարտավորության տրված*** գույքի մասին է, ուստի ստացվում է՝ օրենքը, այնուամենայնիվ, չի բացառում հնարավորությունը՝ դիմելու ու հետ ստանալու ինքնապաշտպանության արդյունքում մյուս կողմի ***ձեռք բերածը***[2]: Այսինքն՝ վաղեմության ժամկետի ավարտից հետո օրենսդիրը պաշտպանում է միայն կամային կատարման արդյունքում ստացվածը, ընդ որում այդ կամքը պետք է ուղղված լինի հենց պարտավորության կատարմանը (այս տեսանկյունից, օրինակ, պահման առարկա հանդիսացող գույքը չի համապատասխանի հոդվածի նշված չափանիշներին. այն թեև տրվել է անձի կամքով, սակայն ոչ ի կատարումն պարտավորության): Մինչդեռ ինքնապաշտպանության դեպքում գույքը ոչ թե տրվում է, այլ պարտատերն ինքն է վերցնում՝ պարտապանի կամքին հակառակ: Այսպես, եթե օրենսդիրն անթույլատրելի է համարում անգամ կամային գործողությունը (թեև վերադարձման ոչ ենթակա անհիմն հարստացում է), առավել ևս անթույլատրելի են հարկադրանքի տարր պարունակող ինքնապաշտպանությանն ուղղված գործողությունները, որոնց արդյունքում ձեռք բերվածը կարող է փաստորեն վերադարձվել որպես անհիմն հարստացում:

Փաստացի հայցային վաղեմության ժամկետի լրանալն ավելի խիստ բացասական հետևանք է առաջացնում ինքնապաշտպանության միջոցների համար. վաղեմության ժամկետից հետո պարտավորության կատարումը, առավել ևս ինքնապաշտպանության միջոցների կիրառումը համարում է իրավական հիմք չունեցող, ուստի ստացածն էլ՝ անհիմն հարստացում, այսինքն՝ ի տարբերություն դատական պաշտպանության դեպքի՝ իրավական հետևանք է առաջացնում ինքնին հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելը՝ անկախ հայցային վաղեմությունը վկայակոչված լինելու հանգամանքից:

Մինչդեռ, կարծում ենք, իրերի նման դրությունն ամենևին համահունչ չէ հայցային վաղեմության էությանը, քանի որ ենթադրում է տևական ժամանակ անց գույքային բարիքների վերաբաշխման հավանականություն (դրանց անփոփոխության նկատմամբ ձևավորված ակնկալիքի պայմաններում) հայցային վաղեմության ժամկետը ինքնապաշտպանության միջոցների նկատմամբ չտարածելու դեպքում տարիներ անց դրանց դիմելու, իսկ տարածելու պարագայում էլ՝ որպես անհիմն հարստացում հետ պահանջելու հնարավորության արդյունքում, ուստիև շրջանառության կայունությունը խաթարելու մեծ ռիսկեր է պարունակում:

---

[1] Նման մոտեցմանը չենք կարող համաձայնել: Իրականում վաղեմության ժամկետի լրանալն ինքին որևիցե իրավական հետևանք չի առաջացնում: Եվ եթե իրենից ինքնապաշպանություն ներկայացնող արարքն իր հիմքում ունեցել է իրավական ակտ կամ պայմանագիր և կարող էր համարվել իրավաչափ մինչև հայցային վաղեմության ժամկետի լրանալը, ապա այդպիսին պետք է համարվի նաև վաղեմության ժամկետը լրանալուց հետո:

[2] Կարծում ենք՝ «տրված գույք» բառակապակցության գործածությունը պատահական չէ. օրենսդիրը չի կիրառել «ի կատարումն պարտավորության ստացված/ ձեռք բերված գույք» կամ «ի կատարումն պարտավորության անցած գույք» կամ նմանատիպ այլ ձևակերպում, որոնց պարագայում հնարավոր չէր լինի միանշանակ պնդել, թե խոսքը գույքի փոխանցման ինչ եղանակի մասին է՝ պարտապանի կամքո՞վ, թե՞ նաև դրան հակառակ, պարտապանի՞, թե՞ պարտատիրոջ ակտիվ գործողություններով: Մինչդեռ հոդվածի տեքստում գործածվող «տրված» բառը թույլ է տալիս պնդել, որ խոսքը պարտավորության կատարմանն ուղղված կամային ակտիվ գործողության կամ առնվազն հստակ արտահայտված համաձայնությամբ տեղի ունեցած գործողության մասին է: Իսկ ՔՕ 343-րդ հոդվածը գալիս է հաստատելու արված եզրահանգումը. այստեղ ևս խոսքը հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո պարտականությունը պարտապանի կամ այլ պարտավոր անձի կողմից կատարելու մասին է, այսինքն՝ կարևորվում է կամքը, ոչ թե վերջնարդյունքը:

Թերևս նման կազուսային վիճակից խուսափելու համար է ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ հոդվածը լրացվել հայցային վաղեմության ժամկետի ավարտից հետո միակողմանի գործողությունների արգելք նախատեսող 3-րդ մասով, որով, ըստ էության, արգելվեց ինքնապաշտպանությունը: Այն թեև, կարելի է ասել, որոշ առումով լուծում է խնդիրը, սակայն այդքան էլ համահունչ չէ հայցային վաղեմության և առհասարակ քաղաքացիական իրավունքի էությանը: Նման կարգավորման արդյունքում հայցային վաղեմությունը դառնում է իրավադադարեցնող իրավաբանական փաստ, ինչը հակասում է հայցային վաղեմության ինստիտուտի էությանը: Բացի դրանից, այդ կերպ օրենսդիրը փաստացի իր վրա է վերցնում պարտապանի շահերի պաշտպանությունը՝ հաշվի չառնելով այդ կապակցությամբ վերջինիս կամահայտնությունը, և դրանով կարծես վերադարձ լինի խորհրդային ժամանակաշրջան, երբ, իրավակարգի առանձնահատկություններից ելնելով, դատարանը հայցային վաղեմությունը կիրառում էր անկախ կողմի միջնորդությունից[1]: Մինչդեռ ներկայիս պայմաններում անհասկանալի է դառնում կողմի կամահայտնության բացակայության պարագայում մյուս կողմի իրավունքների նման սահմանափակումը:

Հաշվի առնելով հայցային վաղեմության ինստիտուտի նպատակները[2]՝ ակնհայտ է, որ դրանք չեն կարող իրացվել միայն դատական պաշտպանության իրավունքի սահմանափակմամբ: Դրանք պահանջում են նույնպիսի սահմանափակումներ նաև պաշտպանության այլ միջոցների պարագայում:

Բացի այդ, տրամաբանական չէ հայցային վաղեմության կիրառությունը սահմանափակել միայն դատական պաշտպանության դեպքերով՝ պաշտպանության մյուս ձևերի համար անձին տրամադրելով անսահմանափակ ժամանակ. չէ՞ որ նշանակություն չունի, թե պաշտպանության որ ձևին դիմելու հարցում է ձգձգում թույլ տվել պարտատերը. ցանկացածի դեպքում դա իր իրավունքների իրականացման հարցում նրա դրսևորած արհամարհանքի, անտարբերության վկայություն է: Բացի այդ, ինչու՞ պետք է թույլատրել շրջանառության կայունության խաթարում երկար տարիներ հետո իրականացվող պաշտպանության արդյունքում:

Ինքնապաշտպանության անժամկետ բնույթը հակասում է հայցային վաղեմության հետապնդած նպատակներին (իսկ պայմանագրով նախատեսելու դեպքում՝ հակասում է նաև հայցային վաղեմության մասին համաձայնություն կայացնելու իմպերատիվ արգելքին), ուստի թե՛ պայմանագրով և թե՛ օրենքով թույլատրված ինքնապաշտպանության իրավունքը պետք է սահմանափակված լինի հայցային վաղեմության ժամկետով:

Այսպիսով, հայցային վաղեմությունը, միտված լինելով պաշտպանելու կողմի՝ տևական ժամանակի հոսքի արդյունքում ձևավորված փաստական դրությունը պահպանելու շահը և քաղաքացիական շրջանառության կայունությունն ապահովելու հարցում հանրային շահը, պետք է կիրառելի համարվի նաև ինքնապաշտպանության դեպքում:

Ուստի առաջարկում ենք «հայցային վաղեմության ժամկետ» եզրույթը փոխարինել «վաղեմության ժամկետ» եզրույթով՝ արտացոլելու այն, որ վաղեմության

---

[1] Տե՛ս **Толстой, Ю. К.**, Давность в Гражданском кодексе Российской Федерации, Правоведение, 1995, № 1, с. 14 – 24, https://uristy.ucoz.ru/publ/2-1-0-659, **Толстой, Ю. К.**, Исковая давность, Журнал “Правоведение”, 1992, № 4, с. 63 – 69, http://law.edu.ru/article/article.asp?articleID=156237:

[2] Առաջին հերթին քաղաքացիական շրջանառության կայունությունը (տե՛ս Гражданское право, учебник, переработанное и дополненно, том 1, под редакцией **А.П. Сергеева, Ю.К. Толстого**, Изд. “Проспект”, М., 2005, էջ 356) և պարտավոր անձի շահերի պաշտպանությունը (տե՛ս United States of America v. Ilario M.a. Zannino, US Court of Appeals for the First Circuit - 761 F.2d 52 (1st Cir. 1985), Decided May 3, 1985, https://law.justia.com/cases/federal/appellate-courts/F2/761/52/277420/):

ժամկետի սահմանափակումը, դատական պաշտպանությունից զատ, վերաբերում է նաև հարկադիր պաշտպանության այլ ձևերին:

Ինքնապաշտպանության միջոցների նկատմամբ հայցային վաղեմություն տարածելու դեպքում, սակայն, հարկ է հստակ սահմանել դրա կիրառության մեխանիզմները՝ հաշվի առնելով կողմերի շահերի հավասարակշռությունն ու հայցային վաղեմության ինստիտուտի նպատակներն ապահովելու անհրաժեշտությունը:

Քանի որ հայցային վաղեմության ժամկետի վկայակոչումն անձի շահերի պաշտպանության միջոց է, ուստի, ելնելով քաղաքացիական իրավունքի սկզբունքներից, այս դեպքում ևս, ինչպես վերը նշեցինք, նման պաշտպանությունից օգտվելու իրավասությունը, հայեցողությունը պետք է թողնվեն պարտապանին:

Ճիշտ է, որոշ դեպքերում անձը հնարավորություն ունի բացառել ինքնապաշտպանության միջոցների կիրառումը նախապես (օրինակ՝ պայմանագրով (ՔՕ հոդված 373, մաս 4)), սակայն այն դեպքերի համար, երբ նման հնարավորությունը բացակայում է, կամ անձը ինչ-ինչ պատճառներով նախապես չի արել դա, այնուամենայնիվ պարտապանը դարձյալ պետք է հնարավորություն ունենա պաշտպանելու իր շահերը: Ուստի հարկ է նախատեսել համապատասխան մեխանիզմներ, որոնք այդ դեպքերում ևս հնարավորություն կտան անձին հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո պաշտպանել իր շահերը՝ ժամկետը լրացած լինելու մասին վկայակոչելու միջոցով:

Նման պաշտպանությունից օգտվելու համար անձը նախ պետք է տեղյակ լինի այդպիսի անհրաժեշտություն ծագելու մասին, և եթե դատական պաշտպանության պարագայում պարտապանը ծանուցվում է ու ստանում նման հնարավորություն, ապա նույնը չենք կարող ասել ինքնապաշտպանությանն ուղղված որոշ միջոցների համար:

Այսպես, օրինակ, հաշվանցի դեպքում, մանավանդ նկատի ունենալով այն, որ ինքնին հաշվանցի իրավական հիմքը կարող է ծագել, ուստի և հաշվանցին ուղղված գործողությունը կատարվել հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո, անձը հայցային վաղեմության միջոցով պաշտպանվելու համար պետք է տեղյակ լինի իր կոնտրագենտի՝ հաշվանցի դիմելու մտադրության մասին:

Նկատի ունենալով այս հանգամանքը, հայցային վաղեմության միասնական կարգավորումներ նախատեսող միջազգային փաստաթղթերը (Ունիդրուայի սկզբունքներ, Եվրոպական մասնավոր իրավունքի մոդելային կանոններ), ընդգծելով պարտապանի կողմից վաղեմությունն անցած լինելուն հղում անելու պարագայում իրավունքը հարկադիր իրականացնելու անթույլատրելիությունը (Ունիդրուայի սկզբունքներ, հոդված 10.10)[1], սահմանում են հաշվանցի նկատմամբ հայցային վաղեմության կիրառման առանձնահատկություններ՝ ընդգծելով պարտապանի՝ վաղեմությամբ պաշտպանվելու համար ողջամիտ ժամկետ սահմանելու անհրաժեշտությունը (Եվրոպական մասնավոր իրավունքի մոդելային կանոնների 7:503 հոդվածը նման ժամկետ է համարում երկու ամիսը՝ հաշվանցի մասին ծանուցվելու պահից)[2]:

Կարծում ենք՝ նման մեխանիզմը՝ ծանուցման պարտականության նախատեսումը և վաղեմությունը վկայակոչելու համար ժամկետի սահմանումը, արդյունավետ է պարտապանի շահերի ապահովման տեսանկյունից:

Խնդրահարույց է նաև պաշտպանությանն ուղղված այնպիսի միջոցի կիրառումը, ինչպիսին առանց հաճախորդի կարգադրության դրամական միջոցների դուրսգ-

[1] Տե՛ս Unidroit Principles Of International Commercial Contracts 2016, https://www.unidroit.org/instruments/commercial-contracts/unidroit-principles-2016, էջեր 368-370

[2] Տե՛ս Principles, Definitions and Model Rules of European Private Law, Draft Common Frame of Reference (DCFR), Articles and Comments [Interim Edition, to be completed], prepared by the Study Group on a European Civil Code and the Research Group on the Existing EC Private Law (Acquis Group), https://www.ccbe.eu/NTCdocument/DCFRpdf1_1262861061.pdf, էջ 547

րումն է[1] (ՔՕ 922-րդ հոդվածի 2-րդ մաս). բանկը, չլինելով հայցային վաղեմություն կիրառելու իրավասություն ունեցող սուբյեկտ, հաճախորդի հաշվից դրամական միջոցներ դուրս գրելիս չունի պարտականություն ստուգելու հայցային վաղեմության ժամկետը լրացած լինել-չլինելը, մինչդեռ հնարավոր է, որ դուրսգրման պահին հայցային վաղեմության ժամկետն արդեն լրացած լինի, իսկ կողմն էլ, տեղյակ չլինելով նման գործողությունների կատարման մասին, հնարավորություն չունենա առհասարակ որևիցե հիմքով առարկել դրանց դեմ:

Նման դեպքում, օրինակ, բանկի համար կարող է սահմանվել պարտականություն ներկայացված փաստաթղթով կամ պայմանագրով տվյալ պարտավորության կատարման համար նշված ժամկետից երեք տարի հետո ներկայացվելու դեպքում ծանուցել վճարողին և մերժել անակցեպտ դուրսգրումը կամ վճարում կատարել միայն ակցեպտից հետո[2]: Խնդրի լուծման մեկ այլ տարբերակ, թերևս հայցային վաղեմության ինստիտուտին առավել համահունչ, կարող է դիտվել անակցեպտ դուրսգրման համար ժամկետ սահմանելու պարտականության նախատեսումը, որպիսի պահանջը չպահպանելու իրավական հետևանքն էլ կլինի վճարման համար ակցեպտի պարտադիր համարվելը:

Այսպիսով, օրենսդիրը ինքնապաշտպանության դեպքերի համար, ելնելով յուրաքանչյուր միջոցի առանձնահատկություններից, պետք է սահմանի համապատասխան մեխանիզմներ, որոնք պարտապանին հնարավորություն կտան պաշտպանելու իր շահերը:

Ինքնապաշտպանության նկատմամբ հայցային վաղեմությունը տարածելու պարագայում, սակայն, հարց է ծագում, թե արդյոք այդ միջոցով ձեռք բերվածը ենթակա է վերադարձման որպես անհիմն հարստացում:

Ելնելով կայունության և պարտապանի շահերի ապահովման հավասարակշռությունն ապահովելու տեսանկյունից՝ կարծում ենք՝ այս դեպքում ևս հնարավորինս պետք է բացառվի ստացածը որպես անհիմն հարստացում հետ պահանջելու հնարավորությունը (անհիմն հարստացման վերադարձը, խաթարելով շրջանառության կայունությունը, հակասում է հայցային վաղեմության ինստիտուտի էությանը):

Միակ դեպքը, երբ կարող է թույլատրվել այդպիսի վերադարձ, այն է, երբ անձը որպես պաշտպանություն վկայակոչել է հայցային վաղեմության ժամկետ (կամ պայմանագրով արգելել է նման գործողությունները), իսկ մյուս կողմն էլ, չնայելով դրան, դիմել է հարկադիր պաշտպանության[3]:

Սակայն, նկատի ունենալով, որ ինքնապաշտպանության միջոցով գույքը վերադարձրած պարտատերը կարող է օգտագործել այն կամ այդ կապակցությամբ

---

[1] Դրամական միջոցների անակցեպտ (անվիճելի) դուրսգրման ինստիտուտը ընկալվում է որպես պարտավորության հարկադիր կատարման միջոց. պարտապանն ինքը չի իրականացնում պարտավորության կատարմանն ուղղված որևիցե գործողություն: Նրա փոխարեն դա անում է պարտատերը (բռնագանձողը): Տե՛ս **Дракина М.Н.,** Актуальные вопросы безакцептного и бесспорного списания денежных средств, журнал Юридическая работа в кредитной организации, Номер 3/2005, http://www.reglament.net/bank/legal/2005_3_article_1.htm

[2] Պրակտիկային նման մոտեցումն արդեն իսկ հայտնի է: Օրինակ՝ բանկը չի ընդունում դրամական միջոցներն անվիճելիորեն դուրս գրելուն ուղղված ինկասո հանձնարարականը, եթե կատարման ենթակա փաստաթուղթը ներկայացվել է օրենսդրությամբ սահմանված ժամկետից հետո: Տե՛ս Кредитные организации в России: правовой аспект, отв. ред. **Павлодский Е. А.**, М., Волтерс Крувер, 2006, 624 с., էջ 265

[3] Նման հայտարարությունը՝ որպես մյուս կողմի համար պարտականություններ առաջացնող միակողմանի գործարք, վերացնում է ինքնապաշտպանության իրավական հիմքը: Նման պարագայում ինքնապաշտպանության արդյունքում ձեռք բերված գույքն արդեն անհիմն հարստացում է և ենթակա է վերադարձման:

ակնկալիքներ ձևավորել, և նման պարագայում ստացածը որպես անհիմն հարստացում վերադարձնելու պահանջը ավելի կվնասի շրջանառության կայունությունը, կարծում ենք, այդպիսի պահանջների նկատմամբ պետք է սահմանվի հատուկ՝ ընդհանուրի համեմատ կրճատ հայցային վաղեմության ժամկետ (ողջամիտ կարող է համարվել վեցամսյա հայցային վաղեմության ժամկետի սահմանումը)՝ հնարավորինս բացառելու կայունությունը խաթարող իրավիճակների առաջացումը: Հենց սա է այն օպտիմալ տարբերակը, որը հնարավորություն է տալիս մյուս տարբերակների համեմատ առավել քիչ խաթարել կայունությունն ու առավելագույնս ապահովել կողմերի շահերի հավասարակշռությունը:

Այս տեսանկյունից հարկ է ՔՕ 1099-րդ հոդվածում նախատեսել, որ անհիմն հարստացում չի համարվում և ենթակա չէ վերադարձման վաղեմության ժամկետի ավարտից հետո ի կատարումն պարտավորության տրված *կամ ձեռք բերված* գույքը *(բացառությամբ վաղեմության ժամկետի լրացած լինելու մասին հայտարարելուց հետո առանց համաձայնության ձեռք բերված գույքի)*:

Բացի այդ, պարտապանի կողմից հայցային վաղեմության ժամկետի լրանալը որպես ինքնապաշտպանության դեմ առարկության միջոց օգտագործելը երաշխավորելու և նման առարկությունն անտեսելու արդյունքում մյուս կողմի ձեռք բերածը որպես անհիմն հարստացում հետ պահանջելու հնարավորությունն ապահովելու տեսանկյունից, հարկ է լրացնում կատարել 335-րդ հոդվածում՝ ավելացնելով 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝

3. Վաղեմության ժամկետը լրանալուց հետո այդ հիմքով ինքնապաշտպանությունն արգելելու մասին կողմի հայտարարության դեպքում պարտատերն իրավունք չունի իր պահանջի բավարարման համար կատարել ինքնապաշտպանությանն ուղղված գործողություններ: Պարտապանն իրավունք ունի հետ պահանջել նման հայտարարությունից հետո կատարված ինքնապաշտպանության արդյունքում պարտատիրոջ ձեռք բերածը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ հանգում ենք հետևյալին.

1. հայցային վաղեմության նպատակների իրականացումը կարող է երաշխավորվել միայն այդ ինստիտուտի կիրառությունը նաև ինքնապաշտպանության միջոցների նկատմամբ տարածելու պարագայում,

2. օրենսդրությամբ պետք է նախատեսվեն համապատասխան մեխանիզմներ, որոնք կապահովեն պարտավոր անձի կողմից հայցային վաղեմության վկայակոչմամբ պաշտպանվելու հնարավորությունը*:*

ПРИМЕНЕНИЕ ИСКОВОЙ ДАВНОСТИ В СЛУЧАЕ САМОЗАЩИТЫ ПРАВ

Кристине Габузян
Аспирант кафедры гражданского права ЕГУ

В данной статье обсуждается возможность и целесообразность применения сроков исковой давности к такому способу принудительной защиты, как самозащита прав. В статье выявляются неопределенность положений гражданского кодекса по отношению к этому вопросу и связанные с этим риски. В результате для полного достижения целей исковой давности предлагается распространить действие исковой давности на меры самозащиты, а также предусмотреть соответствующие механизмы, которые позволят должнику отстаивать свои интересы, ссылаясь на сроки исковой давности.

THE APPLICATION OF LIMITATION PERIODS IN CASE OF SELF-DEFENSE OF RIGHTS

Kristine Gabuzyan
PhD Student at the YSU Chair of Civil Law

The current article discusses the possibility and expediency of applying the limitation periods to such methods of coercive protection of rights as self-defense. The article reveals the uncertainty of the provisions of the civil code in relation to this issue and the associated risks. As a result, in order to fully achieve the purpose of the limitation periods, it is proposed to extend the application of limitation periods to the measures of self-defense, as well as to provide for appropriate mechanisms that will allow the debtor to defend his interests, referring to the limitation periods.

Բանալի բառեր- հայցային վաղեմություն, իրավունքների ինքնապաշտպանություն, դատական պաշտպանություն, անհիմն հարստացում
Ключевые слова: исковая давность, самозащита прав, судебная защита, необоснованное обогащение
Key words: limitation periods, self-defense of rights, judicial protection, unjust enrichment